

ԱՌԱԿԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԱՐՄԵՆՈՒԷԻ ՍՐԱՊՑԱՆ

Հայ ժամանակակից տեսական աշխատություններում հին գրականության փորձաքննված ժանրերի զատորոշման հիմունքները հատուկ քննության նյութ չեն դարձել։ Առանձին դեպքերում միայն որոշ հայագետներ արել են ուշագրավ դիտողություններ անուղղակի, մեծ մասամբ բանասիրական այլ հարցերի հետ հպանցիկ՝ նպատակ չունենալով սահմանել ժանրերը¹։

Բացառիկ արժեք ունեն այսօրվա համար ևս կիրառելի այն ընդհանրացումները, որ կատարել են միջնադարյան մտածողները՝ հստակորեն բացահայտելով թե՛ սահման տերմինի իմաստը և թե՛ ժանրերի տարբերակման սկզբունքները։ «Սահման,— գրում է Հովհաննես Պլուզ Երզնկացին,— զբնութիւն իւրաքանչիւրոցն և զանխառն առանձնաւորութիւնն յայտնէ, իսկ ռոշումն՝ զպնազանութիւն և զպատիւն արժանաւորութեան»²։ Այստեղ բացահայտորեն շեղւում է. սահմանումը պետք է ցույց տա բուն էությունը, այն առանձնակին, անխառն հատկությունը, որով յուրաքանչյուր բան զատվում է մյուսից։ Բնականաբար, այդ «առանձնաւորութիւնը» չի կարող բոլորի մեջ լինել նույնը և ունենալ որոշվելու միևնույն չափանիշը, ասենք՝ բովանդակությունը, ծավալը կամ գեղարվեստականությունը, կերպարը և այլն։

Առաջ տերմինի ժանրային ներկա ըմբռնումը բավական նեղ է և հեռու նրա ընդգրկման միջնադարյան սահմաններից։ Այդ սահմանները որոշելու համար նախ դիմենք առակին տրված տեսական բնութագրումներին և ապա վկայակոչենք այն օրինակները, որ կոչվել են առակ։

«Առակը» անվանադրությամբ մեզ հասած առաջին գրավոր հուշարձանը Սողոմոնի գիրքն է, որը էական դեր ունի ժանրի պատմական զարգացման ընթացքը պարզելու և առակը սահմանելու գործում։ Միջնադարի նույն տեսարանը՝ Հ. Երզնկացին գրում է. «Արդ, ամենայն գիրք աստուածայինք առանձին անուանադրութեամբք յարգեանցն և յիրացն կոչեցան, որպես Ս գիրքն Մովսիսի, Պատմութիւնն արարածոց, Մնունդ և Ելք։ Եւ այլովք անուամբքն մակագրեցան, նմանապէս, և այլ գիրք մարգարէիցն և պատմութիւնք Թագաւորացն և ի նորս՝ Աւետարանն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Արդ, ի սոցանէ ոմանք յանուն պատմողացն կոչին, և ե՛ն, որք յիրացն և յարգեանցն

¹ Տե՛ս Մ. Էմին, Վէպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, ն. Մ առ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Ա—Գ, Պետերբուրգ, 1894, 1899, Г. Халатянц, Армянский эпос в Истории Армении Монсея Хоренского, ч. I, М., 1896, Դ. Յ ո վ ն ան ե ա ն, Հետադոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, մասն Ա, տետր Բ, Վիլնա, 1897, Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2, Երևան, 1946, И. Орбели, Басни средневековой Армении, М.—Л., 1956, Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Երևան, 1969 և ուրիշներ։

² Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 2173, ԺԴ, էջ 402ա (այս և հետագա ընդգծումները մերն են)։

և ի գործոցն զանուանցն կոչումն բերեն յինքեանս, իսկ Սողոմոնի գիրքս ո՛չ այնպէս, այլ Առակք անուանեալ կոչի, զի ո՛չ միոյ իրաց նշանակ է, այլ զամենայն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեան. և ոչ միայն մարգարէութիւն է և ոչ յատուկ պատմութիւն, զի ոչ յայցեաց սա մարգարէութիւն և ոչ թագաւորութիւն, այլ խնդրեաց իմաստութիւն, որ զամենայն տեսակս բարութեան յինքեան պարունակեալ ունի»³: Այստեղ հեզինակը ոչ միայն բացահայտել է միջնադարյան ստեղծագործութիւնները տարբեր անուններով կոչելու ելակետը, այլև սկզբունքը, որով անվանադրվել են դրանք և որը նույնն է բոլորի համար. որոշել յուրաքանչյուրի «առանձնաւորութիւնը», յուրաքանչյուր դեպքում տիպականը, ինչպես պահանջում է ամեն մի սահմանում:

Ամեն ինչ ասված է բացարձակ պարզությամբ. առակը բնորոշող չափանիշը, ի տարբերութիւն միջնադարյան այլ ժանրերի, մեկը չէ: Եթե ուրիշ տեսակներ անվանադրվել են մի առանձնակի հասկացութեամբ, ապա առակը՝ «ո՛չ այդպէս»: Սողոմոնի գիրքը «Առակք» է կոչվել հենց այն պատճառով, որ ոչ միայն մարգարէութիւն է կամ հատուկ պատմութիւն, կամ նման մի՛ բան, այլ իմաստութիւն, որ իր մեջ ունի ամեն տեսակի խորհուրդ ու խրատ: Այսպիսի մի տեսական բնորոշում ունի և Կորյունը, որ վերաբերում է «Յաճախապատում» ճառերի մեջ եղած առակ կոչվածներին: Նա գրում է. «Սկսեալ երանելոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, դժուարապատումս, առակս խորիմացս, դիւրաւութս, շնորհագիտս բազմադիմիս՝ ի զօրութենէ և ի հիւթով Գրոց մարգարէականաց կարգել և յարինել, լի ամենայն ճաշակաւք աւետարանական հաւատոյն ճշմարտութեան, յորս բազում նմանութիւնս և աւրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութիւնական յուսոյն առ հանդերձեալսն յերկրեալ և կազմեալ, զի ճշտընկալք և դիւրանաւոյցք տիմարագունիցն և մարմնական իրաւք զբաղելոցն լիցին»⁴:

Այս մեջբերումից ևս արվում է միևնույն հետևությունը. առակն ամեն տեսակի խորհուրդ ու խրատ պարունակող բազմադիմի իմաստութիւն է: Սա է առակ տերմինի միջնադարյան ըմբռնումն ու ընդգրկումը, որ միանգամայն համարժեք է ռուսական притча-ին և ոչ басня-ին, ինչպես կարծում է Հ. Մարգունին՝ притча-ն համարելով առակի տարբերակ և բացառելով նրան համազոր տերմինի գոյությունը հայերենում⁵:

Այժմ մատենագիրների տեսական հայացքներն առարկայացնենք փաստերով՝ օրինակներով ցույց տանք, թե ի՞նչ է իր մեջ ընդհանրացնում այդ բազմանշանակ, բազմահատկանիշ տերմինը կամ թե ի՞նչ են առակ կոչված բազմաբնույթ, զանազանակերպ, փոքրածավալ պարզ ու մատչելի ստեղծագործությունները: Նախ դիմենք վկայակոչված աղբյուրների՝ Սողոմոնի «Առակներին» և «Յաճախապատում» ճառերի մեջ բերվող օրինակներին, և ապա՝ դարձյալ հնագույններին՝ Մովսես խորենացուն վերագրվող Պիտոյից գրքին ու Ավետարանին:

Սողոմոնի «Առակք» կոչված ստեղծագործություններն առակներ չեն այսօրվա ըմբռնումով, այլ խրատներ, այլաբանական, իմաստասիրական

³ Նույն տեղում, էջ 363բ:

⁴ Կորյուն, Վարդ Մաշտոցի, հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1952, էջ 46—47:

⁵ «Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը», Երևան, 1976, էջ 190:

մտքեր, նմանաբերություններ առօրյա կյանքից՝ այս կամ այն գաղափարը հաստատելու մտադրությամբ: Բերենք մի քանի օրինակ. «Լաւ է իմաստուն, քան հղօր, և հանճարեղ՝ քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս», «Ծրթ առ մրջինն, ո՛վ վատ, և նախանձեաց ընդ ճանապարհս նորա, և լեր իմաստնադոյն ևս՝ քան զնա: Զի նորա ո՛չ դոյ հողագործութիւն և ոչ հարկադիր և ոչ ընդ տէրամբք էա: Անզգամ և հանդուգն կնոջից թի բաց ոստիր, և մի՛ յամէր ի տեղոջ նորա, և մի՛ հաստատէր զակն քո ի նա, զի այնպէս անցցես ընդ ջուրն օտար, և անցանիցես ընդ գետն օտարական. և ի ջրոյ օտարէ ի բաց լինիցիս, և յօտար աղբիւրէ մի ըմպիցես, զի բազում ժամանակս կեցցես, և յաւելցին քեզ ամբ կենաց»⁶ և այլն:

Բերված օրինակները միանգամայն բավարար են համոզվելու համար, որ առակ անվան տակ ըմբռնվել են խրատներ: Իսկ ի՞նչ են «Յաճախապատում» ճառերի մեջ եղած «յերիւրեալ և կաղմեալ» «առակս» կոչվածները: Կրկին դիմենք բուն ակունքին: «Յաճախապատում» ճառերում առակ են անվանվում կրոնադավանաբանական գաղափարներ մեկնաբանող այսպիսի համեմատություններ. «Որպէս տղայք յորովայնի մտացն ոչ գիտեն, թէ յորպիսի՞ հասակ փոխելոց են տեսանել և վայելել զարարածս, սոյնպէս և մեզ վերինն այն ոչ է իմանալի և գիտելի...», կամ՝ «Որպէս ձմեռն ո՛չ միայն զովացուցանէ, այլև սպանանէ, և ամառն ո՛չ միայն ջեռուցանէ, այլև խորշակահար առնէ, և հուր ոչ միայն ջեռուցանէ և զպէտս լնու, այլև այրէ և ապականէ, և ջուր ո՛չ միայն արբուցանէ զերկիր, այլև ողողէ և վնասէ, այսպէս և ամենայն դարմանք՝ որպէս իւղ և մեղր և գինի և այլն ամենայն՝ ըստ նմին օրինակի: Եւ չափով են խնամք դարմանոյ, և անչափ են տանջանք և մահք: Նույն բնույթն ունի և պահքի մասին որպես առակ մեջբերվող խրատը՝ «Պահք զծածկեալ հիվանդութիւնս, որ ի մարմնի, արտաքս հանէ, զի՞ որպէս գեղ մաղձոյ, ընդ ճաշակիլն իւրում զմաղձն ի բաց փսխէ և առողջութիւն տայ»⁷:

Քաղվածքներից երևում է, որ «Յաճախապատում» ճառերի մեջ ևս «յայս առակ» կոչվածներն ունեցել են խրատի առում: Տերմինի այս հնագույն իմաստը դործնական կիրառությամբ վկայում է և Պիտոլից գիրքը: Ի հաստատումն տեսական ձևակերպումների, այստեղ բերվող առակները ևս իմաստասիրական մտքերը հանրաճանաչ ու մատչելի զուգահեռներով մեկնող խրատներ են: Պարզաբանելու համար, թե ի՞նչ է նշանակում «Դիողինէս տեսեալ զմանուկ ստամբակ, զմանկածուն գաւազանաւն եհար», բերվում է հետեւյալ առակը. «Որպէսզի զայս հավաստեալ իմանալ՝ յանվարժիցն ձիոցն է և ի դերեացեալն ամայի անդաստանաց, յորոց մին զմշակին ահա ամբաստանէ ձեռաց և երկրորդն զվերելակին տխմարութիւն յանհրահանգն յանդիման ելոյ կացուցանէ»⁸:

Առակ ասվածն այստեղ նմանություն, համեմատություն, նույնիմաստություն պարունակող օրինակ է, սակայն ավելի ծանոթ, ըմբռնելի ու հանրահայտ օրինակ, որով բացատրվում է Դիողինէսի արարքի իմաստը, այսինքն՝ նորը, քիչ ծանոթը, անհայտը:

Ավետարանում ևս առակ անվան տակ օգտագործվել են նման ասույթներ:

⁶ «Առակք Սողոմոնի», ԻԴ, 5, 2, 6, Թ, 18 (տե՛ս «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», 4. Պոլիս, 1895, էջ 676, 660, 663):

⁷ «Գիրք որ կոչի Յաճախապատում», 4. Պոլիս, 1824, էջ 11, 36, 107:

⁸ «Սբբոյ հօրն մերոյ Սովսէսի իորենացոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 344:

Օրինակ. Քրիստոս խրատում է ասելով՝ «Ոչ որ ինչ մտան է ընդ բերան՝ պղծ է զմարդ, այլ որ ինչ ելան է ի բերանոյ՝ այն պղծ է զմարդ»։ Պետրոս առաքյալը սա կոչում է առակ և Քրիստոսին խնդրում մեկնել այն⁹։

Խրատ և առած-ասացվածք իմաստավորելու իր այս ունակությունն առակը պահում է և հետագայում։ XIV դ. մտածող Գրիգոր Տաթևացին ևս իբրև առակ է վկայակոչում այնպիսի օրինակներ, որ տեսանք Սողոմոնի և Պիտոյից գրքերում։ Բերենք ղրանցից երկուսը. «Վասն ողորմութեան» կարդացած իր մի քարոզում Տաթևացին ասում է, թե ողորմություն պետք է անել, «բայց միայն առատ կամօք և զուարթ երեսօք, որպէս ասէ յառակն. «Զտուրս զուարթս առատս սիրէ աստուած»։ Սա ևս առակ չէ, այլ՝ ասացվածք։ Նույնն է և հաջորդը՝ «Որպէս ասէ առակն՝ Որ տայ աղքատաց, ոչ կարոտեսցի»¹⁰։

Քարոզների մի ուրիշ հեղինակ ևս առակն օգտագործում է ասացվածք իմաստով. «Ասէ առակն՝ Զամենայն բարկութիւն թափէ անզգամն, իսկ իմաստունն մեղմով համբերէ»¹¹։

Առակի այս ըմբռնումը միայն հայկական երևույթ չէր։ Իր նամակներից մեկում Եվագրոս Պոնտացին գրում է. «Յառակի ուրէք ասացեալ է, թե՛ Խածեալն յիծէ զցասա իւր պատմէ յաղորդին կրից իւրոց, զի դիպեսցի ինչ մխիթարութեան»¹²։

Առակ տեքստի հնօրյա գործածության երրորդ առումն առասպելն է։ Վերստին անդրադառնանք վաղեմի գրավոր աղբյուրներին։ Տրդատ Թագավորի արշավանքների պատմությունն անելով, Ագաթանգեղոսը գրում է. «Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ իբրև զսէզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»¹³։ «Առակ» բառն այստեղ որոշակիորեն ունի առասպելի, չափազանցության իմաստ։ Դրա վրա այլ առիթով ուշադրություն է դարձրել հայագետ Հ. Տաշյանը. «Կարծեք թէ հոս, «Բանք կարգի առակաց» ասութիւնը կնշանակէ այն երգերը, զոր մեր նախնիք նաև «Բանք առասպելի», «Առասպել», «Վիպասանց երգ», «Վիպասանութիւն» և այլ անուանակոչութեամբ կնշանակեն»¹⁴։ Հ. Տաշյանը դրանք կոչում է զրույց։ Այստեղ, եթե հետևելու լինենք նրա օրինակին, արտահայտվում է առակի ո՛չ միայն առասպել, այլև ավելի լայն առումը՝ նաև վիպասանաց երգ, վիպասանություն և զրույց։

Առակ գործածվել է նաև հանելուկի ըմբռնումով, ինչպես այդ երևում է Շնորհալու գործերից։ Դրանք ժանրի տիպական առումով հանելուկներ են, բայց անվանադրվել են նաև «Առակք վասն ուրախութեան մարդկան»¹⁵։ Սրան

⁹ «Աւետարան ըստ Մատթէոսի», ԺԵ, 11—12, 15—16։

¹⁰ Մատենադարան, ձեռ. № 2189, 1394 թ., էջ 66ա-բ, 78ա։

¹¹ Նույն տեղում, էջ 90բ։

¹² «Սրբոյ Հօրն Նազարի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք, Թարգմանեալք ի յունէի հայ բարբառ», աշխատասիրությամբ Բ. Սարգիսյան, Վենետիկ, 1907, էջ 334։

¹³ «Ագաթանգեղոսի Պատմութիւն Հայոց», աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց, Տիփլիս, 1909, էջ 71։

¹⁴ Հ. Տաշեան, Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին և պատմական ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891, էջ 132, Մ. Աբեղյան, Երկեր, Ա. Երևան, 1966, էջ 183, ձեթ. 2։

¹⁵ Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 560։

նպաստել է հանելուժների ինչպես առարկայական լուսաբանության օրինակ ծառայելու ունակությունը, այնպես էլ ծածուկ միտքը նմանաբերությանը, ոչ անմիջաբար, այլ մտածել, կռահել տալու եղանակով հասկացնելու առանձնա՝ատկությունը, Կիրակոս Գանձակեցին ևս դրանք առակ է կոչում¹⁶։

Առակ անվանմամբ գործածվող մանրապատումների մեջ է և զրույցը։ Այս անգամ ևս վկայակոչենք Ավետարանը։ Հայտնի է, որ Քրիստոս խոսում էր առակներով, Իսկ ի՞նչ էին դրանք. փոքրածավալ ժանրեր առհասարակ, պերադանցորեն զրույցներ, որ կոչվել են ոչ այլ կերպ, քան միայն առակ։ Բերենք հետևյալ օրինակը. «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յաղարակի իւրում։ Եւ ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամի-նորա և ցանեաց ի վերայ որոմն ի մեջ ցորենոյն և գնաց։ Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ, ապա ևրեցաւ և որոմնն։ Մատուցեալ ծառայք տա-նուտեառնն ասնն ցնա. Տէ՛ր, ո՛չ սերմն բարի սերմանեցեր յազարակին քում, ար, ուստի՞ ունիցի զորոմնն։ Եւ նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն։ Ասնն ցնա ծառայքն. Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց։ Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛, դուցէ մինչ քաղիցէք զորոմնն և զցորանն ընդ նմին ի բաց խլիցէք։ Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչև ի հունձս, և ի ժամա-նակի հնձոց ասացից ցհնձողսն. Քաղեցէք նախ զորոմնդ և կապեցէք զայդ ի խրձուես առ ի յայրել և զցորանն ժողովեցէք ի շտեմարանս իմ»¹⁷։

Ձևագրերում ևս շատ զրույցներ իրենց սկսվածքում կամ բարոյախոսության մեջ ունեն «Ասի յառակաց», «Ասայ զառակս», «Յուցանէ առակս», «Ձևացոյ զառակս», «Այս Բ առակս» և նման ուրիշ վկայություններ¹⁸։ Ահա դրանցից մեկը. «Ասի առակաց, թէ այր մի աղաչէր զաստուած տալ նմա հա-րիր դրամ, և ասաց. Թէ տաս հարիր դրամն, նա տասն քեղ ձիթագին տամ։ Եւ ի աստմանէն աստուծոյ ի միում աւուր եգիտ հարիր դրամ՝ պակաս տաս։ Եւ ասէ. Իմ արարիչ աստուած, քո մէկ խելօքութիւնդ այս է, որ փէշին զքո տաս դրամ ձիթագինն ես առել և ապա հարիր՝ պակաս տաս ինձ տուիր»¹⁹։

Այսպիսի մի զավեշտական զրույց է և ստորև բերվող հաջորդ օրինակը, որին կցված է ո՛չ թե բարոյախոսություն, այլ ցուցում՝ հարմար ժամանակ ու հարմար տեղ օգտագործելու մասին, ինչպես արվում են հետաքրքրաշարժ պատմություններն ու անեկդոտները՝ ժամանցի և ուրախության պահին։ «Եկն վաճառական մի ի ժամ ընթերացն և կալաւ էջևան առ դրան մի և մտեալ, զի տեսցէ զայսպնջականն։ Եւ աւազակ մի գաղտ գար զհետ նորա, և կապեաց ձագ մի ի վերայ բռնին և ինքն առեալ զգրաստն և փախեաւ։ Եւ ելեալ վաճառականն ետես զձագն, զի վազէր ի յայս կուս և յայն կուս։ Եւ ասէ հեղութեամբ առ նայ. Ո՛յ ողորմելի ձագ, բեռն աղեկ ունիս, թէ տանիլ կարես։

¹⁶ Ի ի ռ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե Յ ի, Պատմութիւն Հայոց, աշխատանքությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 147։

¹⁷ «Աւետարան ըստ Մատթէոսի», ԺԳ, 24—31, նման զրույցներ, բերված որպես առակ, տե՛ս նաև ԺԳ, 31—34, ԺԸ, 23—35, Ի, 1—17, ԻԱ, 33—42 և այլն։

¹⁸ Տե՛ս ն. Մ ա ո, Ժողովածոյ առակաց Վարդանայ, մասն Բ (այսուհետև՝ Մ ա ո, Բ), Պետերբուրգ, 1894, էջ 226 (ԺՂ), 27 (ԻԲ), 90 (Հ), 58 (ԽԱ), 96 (ՀԵ), 126 (ՃԺ), 322 (ՅԵԸ), II. М а р р. Сборники притч Вардана, ч. III. Приложение (այսուհետև՝ М а р р, III), СПб., 1894, с. 99 (ԺՋ)։

¹⁹ Մ ա ո, Բ, էջ 323 (ՅԽԲ)։

Ձևացող զառախս, թէ ծանդր իրք կամիս ասել կամ ձեռն արկանեն դու և կամ այլ մարդ ինչ ի գործ, որ ծանդր լինի, քան զձեր կարողութիւնդ»²⁰,

Առակի զրույց առումն ավելի ցայտուն են արտահայտում այն օրինակները, որոնց մեջ միևնույն ստեղծագործությունն անվանվում է և՛ առակ, և պատմութիւն²¹: Այդպիսի կրկնակի կոչումներ ունեն բավականին զրույցներ, սակայն որպես առակ են ներկայացվել նույնիսկ զրույցների ամբողջական շարքեր: Այս առումով բնորոշ է Մատենադարանի № 2189 ձեռագրում պահպանվածը, որի բովանդակությունը ծանուցվում է «Առակք ստեղծականք պիտանիք առնուլ ի զրուցատրութիւնս և յասացուածս արարեալ Յոհաննու Մործորեցո» խորագրով²²: Այստեղ ընդգրկված են զրույցներ ու անեկդոտներ, բայց ո՛չ առակներ:

Վարդան Այգեկցու անունով հայտնի ժողովածուների հանգամանալից ուսումնասիրությունից հետո Մառք «Ասի ի յառակաց» ըստ հարկի թարգմանում է. Рассказываются в притчах (баснях, сказках, пословицах и т. п.)²³: Եվ ո՛չ միայն թարգմանում. միևնույն ստեղծագործությունն ինքը ևս կոչում է թե՛ առակ, թե՛ զրույց (притча, сказка) և առակ տերմինի տակ դնում մի քանի նշանակություն²⁴:

Ըստ էության առակի իմաստային նման ըմբռնումով է խոսում և Մ. Արեղյանը, գրելով՝ «Նոգեկորականները վերջ ի վերջո սկսում են ժողովել ամեն տեսակի պատմվածքներ, որոնց տալիս են խրատական այլաբանության ձևը, և որոնք մեր հին դրականության մեջ հայտնի են մի ընդհանուր առակ անվան տակ»²⁵:

Առակ անվանման բազմանշանակ արժեքի պատճառը միանգամայն բնական կդառնա, եթե նկատենք, որ առակ նշանակել է նաև օրինակ: Վերջինիս մեծ տարողությունն է, որ առակին տվել է ընդգրկման լայն սահմաններ, քանի որ օրինակ կարող էր ծառայել ամեն բան, որ օգնում էր պարզաբանելու միտքը: Այս առումով է, հիմնականում, այսինքն՝ օրինակ լինելու ուժով է, որ ժանրային տարբեր նկարագիր ունեցող մյուս փոքրածավալ ստեղծագործությունները մտել են նույն հավասարության մեջ՝ առակ անվան տակ:

Քարոզիչները, ձեռագիր կազմողները կամ գրիչները նույնպես երբեմն ուղղակի շեշտում են, թե այդ «գեղեցիկ պատմութիւնք անծանօթք»-ը առաջ են բերել «վասն օրինակի»²⁶, կամ Տերն օրինակով (առակով) է խոսում, որովհետև առանց մարմնավոր օրինակի անհնար է հոգևոր բանն հասկանալ, քանի որ «Մարմնաւոր բանն ճարտար գիտեմք»²⁷: Ինչպես վերը տեսանք, նույնն է ասում և Կորյունը:

²⁰ Նույն տեղում, էջ 58 (հԱ):

²¹ Նույն տեղում, էջ 260 (ՄԱ), 277 (ՄԾԸ), 286 (ՄՀ), 292 (ՄԶԸ), «էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից», խմբագրությամբ և տառադրանով Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1957, էջ 116—120, №№ 85—86, Ա. Սրապյան, Հայ միջնադարյան զրույցներ, Երևան, 1969, էջ 308, № 72:

²² Մատենադարան, ձեռ. № 2189, էջ 424ա:

²³ Н. М а р р. Сборники притч Вардана, ч. I. Исследование (այսուհետև՝ М а р р, I), СПб., 1899, с. 257—259, նաև էջ 49, 63:

²⁴ Նույն տեղում, էջ 186—187 (§ 185—187):

²⁵ Մ. Արեղյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 184:

²⁶ Մատենադարան, ձեռ. № 2226, 1450 Բ., էջ 250բ:

²⁷ Նույն տեղում, ձեռ. № 657, ԺԴ, 1614 Բ. և հետո, էջ 206ա-բ:

Ինքզինքն Բուր զուգահեռները ևս այդ են հաստատում: Բառարանները նույնպես առակի հոմանիշների թվում վկայում են օրինակը: Հաճախ առակները հենց այդպես էլ կոչվում են: Այսպես, «Հողագործ և արագիլ» առակը մի բարոյախոս կոչում է առակ, մյուսը՝ օրինակ, «Արագիլ և տատրակ» առակը մեջ է բերվում իբրև օրինակ: Իր բարոյախոսական վերջաբանում օրինակ կոչումն է ստանում «Արագիլ և ճայեակ և յոպոպ» առակը և այլն²⁸:

Այն հանգամանքը, որ առակներն անվանվում են նաև օրինակ կամ միևնույն ստեղծագործությունը մի դեպքում կոչվում է առակ, մյուսում օրինակ, լրացուցիչ վկայում է, թե առակ տերմինն իր լայն ընդգրկման մեջ առնելով տիպաբանական տարբեր առանձնահատկություններով բնութագրվող օրինակ-ստեղծագործություններ, սկզբնապես չի՝ արտահայտել որևէ մեկ՝ որոշակի ժանրի առանձնահատկություն: Առակ անվան տակ հասկացվել է որևէ միտք նմանաբերությամբ ու համեմատությամբ լուսաբանող և հաստատող առարկայական օրինակ կամ իմաստություն՝ առակ, առած, ասացվածք, սուսուպել, խրատ, զրույց, հանելուկ և այլն:

Իսկ ինչպե՞ս էր կոչվում բուն առակը: Բուն առակը միջնադարի տեսական աշխատություններում ներկայանում է առասպել տերմինի տակ, որպես «ոչ եղանակ» պատմություն, երկու հիմնական տեսակով՝ եպիգրաֆան (պարսավական) և խրատական՝ որպես նմանվելու օրինակ: Քերականները գրում են. «Եւ լինին առասպել ըստ երիս եղանակս՝ ըստ պիտակութեան, ըստ հագներդութեան (այլ ընթերցված՝ հեգնարկութեան—Ա. Ս.), ըստ փոխաբերութեան: Արդ՝ ըստ պիտակութեան է ամենեկին անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս Պասիփայ Արեգական դուստրն ցլու տոփիլ, կամ զԴինայէ պահէր Կրիսոս յերկաթի կուսաստանս²⁹, Իսկ ըստ հագներկութեան, որ է եպիգրական, որպէս Գորտուն և աղունսուն, կամ Ազուաուն և աղունսուն, և կամ՝ Ճային և հաուցն, կամ Իշուն և առիծուն և հարսանեացն, և կամ Առիծուն և աղունսուն: Իսկ ըստ փոխարկութեան (այլ ընթերցված՝ փոխաբերութեան—Ա. Ս.) խրատուցն օրինակ, որպէս Նապաստակացն և գորտուցն, և կամ Կապկացն և կամ Գայլուցն և ոչխարացն»³⁰:

Ինչպես տեսնում ենք, առասպել անվան տակ հատկանշվում են և առակներ: Այդ է հավաստում և Ողոմպիանու առակներից երրորդը, որի խրատական մասն սկսվում է «Խրատէ առասպելս» հղումով³¹: Սա բացառություն չէ. այսպիսի շատ օրինակներ կարելի է նշել և «Բարոյախոս»-ից³²: Այս իմաստով ավելի որոշակի է Թովմա Արծրունու ուղղակի նշումը. «Ի դէպ ելանէ և հին առասպէլն Ոլպիանու փիլիսոփայի, որ վասն առիծուն և զուարակացն են բարառնութիւնք»³³, կամ՝ «Առ սա ինձ ի ճախ ելանէ քերթողական առասպելն,

²⁸ Նման օրինակներ տե՛ս Մ ա ո, Բ, էջ 192—193, 228—229, 332, 342, Մ ա ր ր, III, էջ 160, 104, 168:

²⁹ Առասպելները տե՛ս Ն. Ա. Կ ու ն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1956, էջ 139 և հտտ.:

³⁰ Մատենադարան, ձեռ. № 2366, ԺԴ, էջ 28բ, հմմտ. Ե ս ա յ ի Ն չ ե ց ի, Վերլուծութիւն բերականութեան, Երևան, 1966, էջ 64—65:

³¹ «Առակք Ողոմպիանու, Վենետիկ, 1854, էջ 171:

³² Առակները տե՛ս Մ ա ր ր, III, ց. 136 և հտտ. (ՄՄ Գ₃—Գ₁₁ և այլն):

³³ «Թ ո վ մ ա յ ի Ա ր ծ ր ու ն ու յ Պ ա տ մ ո թ ի ն տ ա ն ն Ա ր ծ ր ու ն ե ա ց», ս. Պետերբուրգ, 1887, էջ 123 (առակը տե՛ս «Առակք Ողոմպիանու», էջ 170, № 13):

որ ասէ. բազում անգամ աղուեսք թագաւորել խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն»³⁴, Կասկածից վեր է, որ երկու դեպքում էլ խոսքն առակաների մասին է³⁵, Քիչ չեն այսպիսի և ուրիշ օրինակներ, երբ միևնույն ստեղծագործութիւնը ձեռագրերից մեկում կոչվում է առակ, մյուսում՝ առասպել³⁶:

Առակ տեքմինն իր նեղ՝ այսօրվա ժանրային իմաստը ձեռք է բերում աստիճանաբար: Տեքմինի գործառական «առանձնաւորութիւն»-ը որպէս ամեն տիպի խորհուրդ ու խրատ տեղի է տալիս բովանդակութեան «առանձնաւորութեան»-ը՝ այլաբանական եղանակին: Ժանրի համար սկսում է կայունանալ մի էական ու կարեւոր հատկանիշ՝ այլաբանութիւն, որ դառնում է տարբերակիչ ու մնայուն չափանիշ: Միջնադարյան մտածողներն արդեն առակը սահմանում են նաև ժանրային այդ բնութիւնով: 1320 թ. մի ձեռագրում պահպանվել է հետևյալ ձևակերպումը. «Իսկ եթէ զի՞նչ առակ. առակ է բան բառի իբր վարագուրաւ ծածկեալ այլո իրաց վերեւեւումն ունել, որպէս Առակն Սողոմոնի, բայց ըստ պարզ յայտնութեան գրոցս սովորութեան աւրինակ ասի, իբր թէ արինակաւ յայտ կացուցանել զբանին իմաստս, յորժամ լսողքն անկատարք իցեն, որպէս առնեն կատարեալ վարժապետք ժանրաւոր ծանաթից: Այս արագաւ և Տէրն յաւել առակ նոցա, իբր թէ բազում բանք առկաւորք մինչև ցայս վայրս խաւեցեալ էր առ նոսա..., իսկ զայս յաւելուած յառաջնոցն արար, և կամ թէ չէր պէտք առակ..., ուստի և զառակս յաւելուած կոչէ»³⁷: Այս բնորոշումը ևս թեև չի սահմանազատում բուն առակը փոքրածալ արձակի այլ ժանրերից, բայց միանգամից բացահայտում է նրա ջեհ՝ հին, թե՛ նոր ըմբռնումները, գործառական դերն ու ոլորտները՝ մի քանի կարեւոր հատկանիշների մեջ ամփոփված. առաջին և հիմնական՝ առակն այլաբանութիւն է, և ապա՝ առակը կոչվում է նաև օրինակ, օգտագործվում հասարակութեան լայն՝ «անկատար» զանգվածների, «ծանրաւոր» հասկացողների համար, որպէս միտքը պարզաբանող լրացուցիչ միջոց՝ որպէս նախնական և ոչ ինքնակա գործ: Առաջինը սահմանում է ժանրի դրական, գեղարվեստական «առանձնաւորութիւնը», մյուսները՝ կիրառական:

Միջնադարյան իմաստասերներն ունեն առակի առաջնային, հիմնական հատկանիշի՝ այլաբանութեան էութիւնը հանգամանորեն բացահայտող վերլուծութիւններ ևս: Այսպէս, օրինակ, Հովհաննէս Երզնկացին գրում է. «Ամենայն առակքն այլապէս ձևեալ և ոչ յայտնէ առ տեղեալն զցուցումն ճշմարտութեանն, քանզի ոչ նոյն է զօրութիւն բանին և առակին, այլ ա՛յլ է զօրութիւն առակին և այլ ստուգութիւն ճշմարտութեանն...»: Քրիստոս ...բազում ինչ առակօք խօսէր ի քարոզութիւն Աւետարանին՝ մանանխոյ և խմորոյ և վաճառականի և մարգարտի և ուռկանի նմանեցուցանելով զարքա-

³⁴ «Թ ո վ մ ա յ ի Ա թ թ ռ ու ն ո յ Պ ա տ մ ո թ ի ն տ ա ն ն Ա թ թ ռ ն ե ա ջ», էջ 66:

³⁵ Տէ՛ս Մ ար ր, III, c. 138 (Գ₁₀, «Հուարակք և առիւծ»), նաև՝ «Գայլք և ուլարք» առակը վկայաբերված որպէս առասպել (էջ 138 (Գ₉)):

³⁶ «Գայլագուս պանիր ի կտուցն և աղուէս հայտնի առակի մի տարբերակում օցուցանէ առակս» փոխարինված է «զայս առասպելս»-ով, «Հայր ի տանջանս և Գող որդին» զրույթը մի դեպքում ունի «ցուցանէ առակս», մի ուրիշում՝ «նշանակէ խրատս», «Մանուկ թագաւորի և զաւրք» կոչվածը՝ միաժամանակ և՛ պատմութիւն, և՛ առակ. և այլն (տե՛ս Մ ա ռ, Բ, էջ 29 (ԻԴ), 15 (ԺԲ), 292 (ՄԶԸ), 262 (ՄԼԳ, ՄԼԳա), 275 (ՄԾԵ), 277 (ՄԾԵ, ՄԾԸ), 280 (ՄԿԳ), 284 (ՄԶԵ), 286 (ՄԶԵ), Մ ար ր, III, c. 136—139 (Գ₃—Գ₅, Գ₇—Գ₁₁) և այլն:

³⁷ Մատենադարան, ձեռ. № 1098, 1320 թ., էջ 30բ—31ա:

յութիւնն և այլ բաղում իրաւք նշանակելով: Եւ ահա տեսանեմք, զի ա՛յլ է միտք և տեսութիւն իրացն և ա՛յլ ասացելոց անուանցն կերպարանք, զի թէ պարզ տեսութեանն իմանամք, զիա՛րդ նմանեալ լիցի արքայութիւնն երկնից հասոյ մանանխոյ, որոյ այնքան ընդարձակութիւն մեծութեանն..., նոյնպէս և զայլն իմասցիս առականոր բանս..., յաղագս որոյ զանազան անուանս առակաւ կոչեցաւ ճանապարհ և դուռն, սիւն և ամբ...: Բայց ա՛յլ է զարու-թիւն մտացն և տեսութեանցն, որք յայտնի են քննասիրացն: Ժանապարհ կոչի, զի նովաւ դնամք յարքայութիւն նորին, և դուռն, զի ընդ նմա մտանեմք առ հայր...»³⁸ և այլն:

Ինչպէս տեսանք, քերականները ևս ժանրի բովանդակութեան այլաբանական հատկութիւնն են առանձնակի շեշտում՝ առականը ներկայացնելով որպէս փոխաբերութիւն և նմանաբերութիւն, թեև առասպել տերմինի տակ: Սակայն Վարդան Արեւելցին արդեն որոշակիորեն զատում է առակն առասպելից և՛ տերմիններով, և՛ գործնական կիրառութեամբ՝ առակի տակ դնելով բուն առակներ, առասպելի տակ՝ առասպելներ³⁹:

Առակը որպէս այլաբանութիւն է օգտագործվում, և նրա այդ դերն է հատուկ շեշտվում և Քարոզգրքում. «Առակ զաղուեսուն եդին առ ի մարդիկ շահելոյ»⁴⁰:

Այլաբանութիւնն, ի վերջո, այնքան է մերվում առակին, որ նույնանում է նրա հետ. «Առակօք» խոսել, նշանակում է այլաբանութեամբ խոսել: Առակն այդ նոր հատկանիշով էլ գործածում է XIII—XIV դդ. բանաստեղծ Կոստանդին Երզնկացին: Նրա այլաբանական ստեղծագործութիւններն ունեն «Բանք... դոր առակօք խօսի այսպէս», «Այս գարունս զգալուստն Քրիստոսի պատմէ առակօք» և նման այլ նշումներ⁴¹: Այս սկզբունքով էլ բավական էր որեւէ մանրապատումի, մինչև իսկ անեկդոտի կցել այլաբանութիւնն ենթադրող մեկնութիւն, որպեսզի այն հնչեր որպէս առակ, մինչդեռ բուն առակը, կորցնելով իր այլաբանական իմաստը, վերաճում է փոքրածավալ այլ ժանրի, մասնավորապէս՝ դրույցի⁴²:

Այսպիսով, առակ անվանումը սկզբնապէս չի գործածվել ժանրի նեղ, այսօրվա առումով. նրա տակ հասկացվել են ամեն տիպի փոքրածավալ ստեղծագործություններ, որոնք առակ են կոչվել որպէս օրինակ՝ ունենալով գործնական կիրառության նույն ոլորտներն ու իրատարածուցողական նույն նպատակը: Իր այս ընդգրկումով առակը համազոր է ռուսական притча-ին, ժանրային իր նեղ ըմբռնումը (որպէս басня) առակը ձեռք է բերում ճեղգնե-տե, որ ուշ միջնադարում դառնում է մնայուն և գոյատևում առ այսօր:

Առակների առաջին ժողովածուները երևան են եկել Մխիթար Գոշի անու-նով: XII դ. սկսած հիմնականում սկիզբ է դրվում տերմինի այսօրվա ըմբռնմանը, սակայն կիրառվում է ոչ միանգամից: Ինչպէս Վարդան Այ-

38 Նույն տեղում, ձեռ. № 2173, էջ 364ա-բ:

39 Տե՛ս Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1972, էջ 83—84:

40 М а р р, I, с. 140.

41 Տե՛ս «Կոստանդին Երզնկացի», աշխատասիրութեամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 117, 124, 128, 131, 137, 150:

42 Տե՛ս Մ ա ո, Բ, էջ 194 (ՃԿԲ), 44 (ԱԱ), «Առակը Մխիթարայ Գոշի», Վենետիկ, 1854, էջ 79:

գեկցու, այնպես էլ առականների ալ ժողովածուներ շարունակում են ստեղծվել հին սկզբունքով, որպես ամեն տեսակի խորհուրդ ու խրատ։ Այդ ավանդույթը հարատևում է մինչև XX դ. առաջին տասնամյակները։

ЖАНРОВОЕ ПОНИМАНИЕ АРАКА (ԱՌԱԿ) В СРЕДНЕВЕКОВЬЕ

АРМЕНУИ СРАПЯН

Резюме

В средневековье термин *арак* охватывал самые разнообразные сочинения, заключающие в себе «совет и назидание мудрости». Все дошедшие до нас литературные памятники под названием *арак* подтверждают это. Они не басни в современном понимании этого слова, а произведения прозы малых форм: назидание, басня, пословица, поговорка, миф, сказ, анекдот и пр. Причина такого широкого охвата термина заключалась в том, что *арак* означал пример, уподобление, иносказание, придающее отвлеченным мыслям наглядность. *Арак* в подобном понимании равнозначен русской притче. Для собственно басни в средние века применялся термин *араспел* (миф) как выражение не прямой, а иносказательной мысли. Иносказание настолько сливается с *араком*, что становится его жанровой особенностью. Постепенно *арак* приобретает более узкое значение басни, сохраняя его по сей день. Однако до первых десятилетий XX в. как басни Вартана Айгекци, так и другие сборники араков, по сути, составлялись соответственно первоначальному смыслу термина, т. е. как сборники притч.